

ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՂԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԸ ՃԱՊՈՆԻԱՅՈՒՄ *)

I

Ճապոնական դաստիարակութեան վերաբերեալ ֆրանսի-
րէն լեզուով լոյս տեսած յօդուածների մեծ մասը ներշնչուած
են այն միջանի գրքերով, որոնք նորերս հրատարակուեցին
Ֆրանսիայում: Դրանցից մէկի մէջ ես ցաւով նկատեցի, որ հե-
ղինակը վրդովեցուցիչ յամառութեամբ պնդում է ճապոնական
ուսուչապետների և ուսանողների հպարտութեան վրայ: Այս
բամբասանքն արձագանգ գտնելով զանազան թերթերի մէջ՝
ճապոնացիներն վարկաբեկ է արել օտարներն աչքում:

Եթէ կրոպացին հպարտութիւն է գտնում մեր ուսուցչա-
պետների և ուսանողների մէջ, վստահ է արդեօք, թէ մեզ վե-
րագրուած այդ թերութիւնը նոյն չափով չի նկատուում նաև
աբևտեան միջանի համալսարաններում: Թող ներուի ինձ ա-
սել, որ այն՝ ինչ մեր մէջ համարւում է հպարտութիւն, իմ
կարծիքով ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի փոքր չափազանցացրած
զգուշաւոր վերաբերմունք, որի վրայ աւելանում է նաև որոշ
չափի ինքնավստահութիւն՝ արդիւնք մեր երկրի արագ զար-
գացման: Բայց ժամանակը և իրերի արդար գնահատութիւնը
կ'ուղղեն այդ ինքնավստահութեան չափազանցութիւնները՝ թող-
նելով միայն սեփական կարողութեան գիտակցութիւնը, որ
իւրաքանչիւր մարդ պէտք է ունենայ իր պարտքը լաւ կատա-
րելու համար:

Մենք՝ որ սրանից երեսուն տարի առաջ չէինք ճանաչում

*) Այս վերնագրի տակ Գիտօթի համալսարանի պրոֆեսոր Մ. Միվա մի
յօդուած է հրատարակել ֆրանս. *Revue* հանդիսի սեպտ. համարում: Հեղինա-
կի նպատակն է ցրել Եւրոպայում ճապոնիայի կրթական գործի մասին տարա-
ծուած սխալ կամ չափազանցացրած տեղեկութիւնները: Ի նկատի ունենալով
այն խոշոր հետաքրքրութիւնը, որ ներկայացնում է այժմ ճապոնական ազգը,
կարևոր համարեցինք թարգմանաբար տալ «Մուրճ»-ի ընթերցողներին այդ հետա-
քրքրական յօդուածը, որ ամփոփ դադափառ է առլիս այդ երկրի բարձրագոյն
կրթութեան արդի վիճակի մասին: Խմբ.

արևմտեան գիտութեան նոյնիսկ առաջին տառը, մենք ցանկացանք այն կարգալ ոչ միայն օտար երկրում, այլ և մեզ մօտ: Եւ մեր երիտասարդները երկրէ-երկիր ընկան՝ աշխարհի գիտուններէց խնդրելու գիտութեան այն հացի փշրանքները, որի կարիքը մենք այնպէս զգում էինք: Մենք նոյնիսկ խնդրեցինք բազմաթիւ օտար գիտունների և ուսումնականների գալ մեր երկիրը և բերել այն փշրանքներէց և՛ նրանց համար, որոնք հնարաւորութիւն չունին այնքան հեռու գնալու: Եւ աշխատանքը միացնելով հաստատուն կամքի հետ գործը լաւ տանելու համար, յօգուտ երկրի, մենք յաջողեցրինք, ինչպէս կը վկայեն ամենքը: Մենք կարողացանք բարձրանալ, բայց ոչ թէ բաղաժակրթուած արեւմուտքից վեր և ոչ իսկ նրան հաւասար, այսպիսի յաւակնութիւն իզուր են մեզ վերագրում. մենք բարձրացանք միայն այնքան, որքան բաւական է պատուաւոր ձևով ամեն տեղ ներկայանալու և մեր նիւթական ու մտաւոր պէտքերը մեծ մասամբ հոգալու համար: Անշուշտ ամենմի անաշառ մարդ առանց դժուարութեան կը խոստովանի, որ մի ժողովրդի իրական անկախութեան համար ամենից աւելի անհրաժեշտ է սեփական կարողութեամբ իր մտաւոր և նիւթական պէտքերը հոգալ:

Եւ ինչպէս որ մենք կարողացանք ստեղծել ինժեներներ, բժիշկներ և ազգային օրէնսգէտներ, մենք յաջողեցրինք նաեւ պատրաստել ուսուցչապետներ: Այժմ սեփական ուսուցչապետներ ունենալը մեր երեսին շարունակ է որպէս մի մեղադրանք, որովհետեւ այդ երեսիցի մէջ տեսնում են կրթական գործի համար Եւրոպան դանց առնելու մեր ցանկութիւնը: Ոչ, մենք ամենին չենք մտածում Եւրոպան դանց առնել ոչ այսօր, ոչ վաղը, ոչ կրթական գործում և ոչ մարդկային մտքի գործունէութեան որեւէ ուրիշ ճիւղում: Մենք զգում ենք, ինչպէս բոլոր ուրիշ ազգերը, որ մտքի բացիօնալ՝ զարգացման համար մի ժողովուրդ չի կարող քամահրել և իրան զրկել հարեանների ծառայութիւնից: Ինչ որ մենք փնտրում ենք և ինչ որ կարծում ենք ձեռք ենք բերել, ոչ այլ ինչ է, եթէ ոչ մեր սեփական երկրում կրթուելու հնարաւորութիւն: Եւ այս բանի համար յոյս ունենք, որ ոչ մի մանկավարժ մեզ վրայ քար չի նետի:

Մեր ճապոնացի ուսուցչապետները կարող են ընդունակութեան կողմից մի փոքր վատ լինել այն օտար ուսուցչապետներից, որոնց մենք հրաւիրում էինք երեկ, բայց նրանք երկու առաւելութիւն ունին. նախ՝ դասախօսում են իրանց ա-

շակերտներին հասկանալի լեզուով, որ անշուշտ աւելի պարզութիւն, աւելի կեանք է տալիս դասերին և հետեւապէս աւելի օգտակար է. երկրորդ՝ նրանք օտարներից աւելի լաւ են ճանաչում իրանց աշակերտների ոգին և կարող են աւելի համապատասխան դարձնել դասերը մեր կարիքներին և մտքերին: Մեր գլխովն անգամ չի անցնում զանց առնել օտար ուսուցչապետներին և եթէ գիտենք, որ նրանք այս կամ այն նիւթի վերաբերեալ իրանց գիտութեամբ կարող են մեզ անմիջական օգուտ տալ, մենք միշտ դիմում ենք նրանց: Այս բանում, ես կարծում եմ, կարող էին մեզ հետեւել շատ եւրոպական համալսարաններ, ուր այս միջնոյն ամբիօնները յանձնուած են տեղացիներին, որոնք չնայելով իրանց բոլոր գիտութեան՝ չեն կարող օտար ուսուցչապետների տեղը բռնել: Այսպէս մեզանում նոր լեզուների և օտար երկրների իրաւունքի դասախօսութիւնը յանձնուած է նոյն երկրացի ուսուցչապետներին:

Որովհետեւ խօսեցի նոր լեզուներից, ուստի կ'օգտուեմ առիթից պատասխանելու համար մեր ուսանողութեան դէմ ուղղուած քննադատութեան: Ասում են, թէ նրանք անընդունակ են օտար լեզուով աւանդուած դասերն ըմբռնել ինչպէս որ պէտք է: Սա ճշմարիտ է: Նրանք այժմ էլ այնպէս պատրաստուած չեն այդ անհղու, ինչպէս անում էին մեր համալսարանի սկզբի տարիներում: Ամեն բան ունի իր լաւ և վատ կողմը: Մեր բոլոր ամբիօնները տեղացիներին յանձնելու վատ կողմն է այս: Բայց ո՞վ կարող է հաստատել անկեղծօրէն, որ այժմ մեր ուսանողները աւելի վատ գիտեն անգլիերէն, ֆրանսերէն կամ գերմաներէն, քան եւրոպական համալսարանի ուսանողները. անշուշտ ոչոք: Դա իմ կարծիքով մի անհիմն մեղադրանք է: Մեր ուսանողները նոյնքան գիտեն ժամանակակից լեզուները, որքան իրանց եւրոպայի ընկերները, մանաւանդ ինչ վերաբերում է գործնականին:

II

Մի ժամանակ եւրոպայում կարծում էին, — գուցէ և այժմ, որ արեւելիները անընդունակ են մատեմատիկական նուրբ ուսման: Սխալ է: Մեր 1868 թուի յեղաշրջումից շատ առաջ այդ գիտութիւնը մշակուած էր մեզ մօտ: Վաղուց հետէ ճապոնացիք և չինացիք գիտէին էլլիպսը և պարաբոլը, ինչպէս և նրանց առանձնայատկութիւնները, թէև պէտք է ասել, որ նրանք անգիտանում էին հիպերբոլը: Մենք ուրեմն բաւական պատրաստուած

էինք արեւմտեան մատեմատիկական գիտութիւններն սկսելու համար: Մենք ուսումնասիրեցինք այդ գիտութիւնը, որպէսզի կառուցանանք յաջողութեամբ գլուխ տանել այն բոլորը, որ նրանից է կախուած: Եւ այսօր այդ գիտութեանց հետ կապուած անուններ ունինք մեզանում. այսպէս՝ Ֆուլյիզաւա, որ Գերմանիայում կրօնեկեղերի և Վերշտրասսի մօտ յաջողութեամբ ուսանելուց յետոյ հրաւիրուեց Ճապոնիա համալսարանական ամբիօնի համար: Նա մի աշխատութիւն է հրատարակել էլլիպտիկական բազմապատկութեան թէօրեմաների վրայ: Պարիզի 1900 թ. ցուցահանդիսին նա պատգամաւոր էր մատեմատիկոսների կոնգրեսսում, ուր իր ընկերակիցների ներկայութեամբ կարգաց մի խիստ փաստալից ուսումնասիրութիւն ճապոնական հին մատեմատիկայի վրայ:

Տոկիօի համալսարանի Ֆիզիկայի ուսուցչապետ Նագաօկան առանձնապէս ուսումնասիրել է մագնիսականութիւնը և կծկումների յարաբերութիւնը: Աշխարհի բոլոր գիտունները նրան համարում են այդ մասում այնքան հեղինակաւոր, որ Պարիզի 1900 թ. ցուցահանդիսին նա հրաւէր ստացաւ Պարիզից՝ զնալ Ֆիզիկայի կոնգրեսսն այդ նիւթի վրայ մի ուսումնասիրութիւն ներկայացնելու: Նրա բացատրութիւնները բոլոր ունկղիւնների ընդհանուր հաւանութեան արժանացան:

Եթէ կայ մի գիտութիւն, ուր Ճապոնիայում պէտք է առաջին տեղը բռնէր, դա երկրաշարժների գիտութիւնն է: Եւ աւարօրինակ չէ, որ մեր երկրում մասնաւորապէս զբաղուած են այդ գիտութեամբ, քանի որ մեզանում երկրաշարժներն այնպէս յաճախ են: Երկու եւրոպացիներ՝ Միլն և Էվինգ այդ գիտութեան վերաբերեալ առաջին գիտողութիւններն արին Ճապոնիայում: Ստիպուած լինելով վերադառնալ Անգլիա՝ նշեալ ընդհատեցին իրանց հետախուզութիւնները, և այն ժամանակ Տոկիօի համալսարանի ուսուցչապետ Սեկիան շարունակեց նրանց սկսած ուսումնասիրութիւնները: Գործիքներ հնարեց երկրի շարժումները նշանակելու համար, և նա ինքն է, որ առաջին անգամ կարողացաւ գծագրել այդ երեւումները՝ այսպիսով աչքի առաջ զնելով երկրի ալեծածան շարժումները: Նրա ցաւալի մահուան պարապը շուտով լցուեց: Նա ունեցաւ իրան արժանի մի յաջորդ՝ յանձին ուսուցչապետ Օմորիի, որ նրա ամբիօնն ստացաւ և շարունակեց նրա աշխատանքները: Օմորին այս գործը յաջողութեամբ տարաւ, նա իր գիտուն և աշխատասէր նախորդի հնարած գործիքները այնպէս կատարեւազորեց, որ հեղինակաւոր անձանց զարմանքը շարժեց:

Քիմիան նոյնպէս գրաւել է մեր հայրենակիցներէց շատերին, որոնք օտար երկրներում, ուր նրանք գնացել էին կատարելագործելու իրանց գիտութիւնը, լաբորատորիաներում ցոյց տուած իրանց տոկունութեամբ ուսուցիչների և ընկերակիցների ուշադրութիւնն են գրաւել միշտ: Կիօտօի համալսարանի ուսուցչապետ Իօշիդան շատ լուրջ ուսումնասիրութեան է ենթարկել լաբը (ճապոնեէն—իւրիուզի): Այս նիւթի քիմիական յատկութիւնները գտնելով՝ նա կարողացաւ լաքի թթուաւոր կամ պարզապէս իւրուզովը մտցնել գիտութեան մէջ: Ես պէտք է աւելացնեմ, որ ուսուցչապետ Իօշիդան միջանի անգամ ճանապարհորդել է Չինաստանում լաքի ծառը և լաքի հետաքրքիր պատրաստութիւնը ուսումնասիրելու համար: Նոյնիսկ մի հետաքրքիր փորձ են անում լաքով, որ կարող է լաւ հետևանքներ ունենալ: Այսպէս աշխատում են լաքով պատել նաւերը՝ խիունջներից ազատելու համար, որոնք կաշում են նաւերին և նրանց ընթացքը ծանրացնում:

Ֆորմոզա կղզու տիրապետութիւնը մեզ տուեց կամֆորայի ծառերի մի խոշոր թիւ: Պէտք էր այս հեղուկի պատրաստութեան աւելի նոր և աւելի գործնական միջոց գտնել: Այս գիւտն արեց Տոկիօի համալսարանի դեղագործութեան ուսուցչապետ Շիմօյանան, որի աշխատանքների շնորհիւ այսօր մենք կարող ենք վարել կամֆորայի առևտուրը խիստ նպաստաւոր պայմաններում: Մեզանում հասկացան նաև, թէ ինչ նշանաւոր դեր է խաղում արդիւնագործութեան մէջ լեղակը: Մենք զբաղուեցինք նրա մշակութեամբ, և Տոկիօի մի ուրիշ ուսուցչապետ՝ Նագային գտաւ պատրաստելու այնպիսի հնարներ, որ այժմ մենք կարողանում ենք մեր երկրի պէտքերը հոգալ և արտահանել:

Ներկայ պատերազմը Եւրոպային ծանօթացրեց երկու ճապոնական անուների հետ: Նախ Շիմոզէն, ծովային միսիատրութեան ինժեներ, ճապոնական վառօդի հնարողը: Շիմոզէն, ինչպէս ֆրանսիական նշանաւոր քիմիագէտ Վիկտոր Բնօ, մի քանի անգամ իր փորձերի ժամանակ վնասուել է: Երկրորդը Միաբարան է, որ հնարեց այժմ մեր շատ նաւերի վրայ գործածութեան մէջ մտած խողովակաւոր կաթսան:

Բժշկականութեան մէջ յայտնի է Եւրոպային ամենից աւելի ծանօթ մի անուն՝ բժիշկ Կիտադատօն, որի բակտերիօլոգիական աշխատութիւնները այնպիսի մեծ աղմուկ հանեցին ամեն տեղ: Անօզուտ է այստեղ յիշել նրա գիտական փորձերը կարկամախտի (tetanos) և ձիու սերումի վրայ, ինչպէս և իր ընկեր Աօիամայի հետ կատարած ժանտախտի ուսումնասիրու-

թիւնները: Բերրեքին մի հիւանդութիւն է, որ շատ զոհեր է տանում Ճապոնիայում: Այդ ախտի ուսումնասիրութիւնը կատարեցին բժիշկներ Միուրա և Իամանիվա, երկուսն էլ Տոկիօի համալսարանի ուսուցչապետներ: Բժիշկ Շիգան, նոյնպէս Տոկիօի համալսարանի ուսուցչապետ, աշխատել է դեղինտեքիայի վրայ, և նրա բոլորովին նոր թէօրիան Գերմանիայում հիացմունք շարժեց:

Ինչօ կղզու հետաքրքիր ցեղի՝ այինոսների մարդարանութիւնը ծնունդ տուեց ուսուցչապետ Կոգանէի գեղեցիկ աշխատութիւններին:

Ճապոնիան մասնաւորապէս յայտնի է իր ֆլորայի հարստութեամբ, իր բնակիչների հմտութեամբ պարտիզպանութեան մէջ: Բուսաբանութիւնն ուրեմն պէտք է գրաւէր ճապոնացիներին, և նրանցից մէկը՝ Հիրազէն, ի մեծ զարմանս գիտական աշխարհի՝ Ginkyo-bibola բոյսի բեղմնաւորութեան և ստղծմանութեան մասին տուեց այնպիսի տեսութիւններ, որոնք՝ բուսագէտների ասելով՝ էպոխա կարող են կազմել:

Մետաքսը մեր արդիւնագործութեան մէջ ամենակարեւոր տեղն է բռնում: Տոկիօի համալսարանի ուսուցչապետ Օասաւա-կին շերամի որդի առանձին հիւանդութիւնները և նրանց բժշկութեան հնարը գտաւ:

Ծովային կրիան և սպունգը նոյնպէս Տոկիօի համալսարանի երկու ուսուցչապետների՝ Միտցուկուրիի և Իյիմայի ուսումնասիրութեան առարկան եղան: Ուսուցչապետ Վադազէն, որ սովորել է Ամերիկայում և ուր նա համալսարանում պաշտօն ունէր, որպէս հմուտ կենդանաբան այնքան հոչակ տւեւէր, որ ուզում էին նրան պահել այնտեղ, և միայն մեր կառավարութեան յամառ պահանջի վրայ նա հայրենիք վերադարձաւ:

Մատեմատիկական առարկաներից, ֆիզիկական և բնական գիտութիւններից և նրանց գործադրութիւնից դուրս ես կը յիշեմ Տոկիօի համալսարանի ուսուցչապետ ճարտարապետ Իւտօի անունը: Նա մանրագին կերպով ուսումնասիրել է մեր հին ճարտարապետութիւնը և Ձինաստանում ու Կորէայում կատարած միջանի ճանապարհորդութիւնից յետոյ հրատարակել է մի գործ, որ վերին աստիճանի հետաքրքրական կարող է լինել արեւմտքի հնագէտների և ճարտարապետների համար:

Փիլիսոփայութիւնը մեզանում մի ներկայացուցիչ ունի, որի անունը շատ անգամ յիշատակուել է ֆրանսիական ամսագրերում և լրագրերում: Դա Ինօօուէ Տետցույիրօն է: Ինչ վե-

րաբերում է մեր իրաւագիտութեանը, եւ կը յիշեմ միայն Արիզայի անունը՝

Այն արուարացիները, որոնք կամ ճանապարհորդութեամբ, կամ գրքերով, կամ անձնական յարաբերութեան շնորհիւ կարողացել են ծանօթանալ մեր երկրի ներկայ առաջագիմութեան հետ, կարող են վկայել, որ մենք անարժան չենք նրանցից վերցրած գիտութեանը:

III

Այսպիսի մարդիկ պատրաստելու համար իհարկէ հարկաւոր էր բարձրագոյն կրթութիւն, որը անշուշտ ունի մեզանում դեռ շատ թերութիւններ, բայց անշուշտ գիտողի վրայ այժմ իսկ շատ էլ անախորժ տպաւորութիւն չի գործի:

Տեսնենք այժմ այն ճանապարհը, որով պիտի անցնի իւրաքանչիւր ճապոնացի համալսարան մտնելուց առաջ *)։ Վեց տարեկան հասակում նա մտնում է տարրական դպրոց, ուր կրթութիւնը պարտադիր է չորս տարուայ ընթացքում։ Ապա նա անցնում է տարրական բարձր դպրոցը, ուր դասընթացը դարձեալ չորսամեայ է, բայց 2—3 տարի այս հիմնարկութեան մէջ անցնելուց յետոյ նա կարող է ներկայանալ քննութեան լիցէօն մտնելու համար։ Ճապոնիայում լիցէօնների թիւը 150-ից աւելի է, այնտեղ դասընթացը հնգամեայ է, և ահա այդտեղ է սկսում որեւէ կենդանի լիզուի ուսում, որ համարեա միշտ անգլիերէնն է։ Հազիւ 2—3 լիցէօն պատահի, ուր կարելի է սովորել գերմաներէն, իսկ ֆրանսիերէն և ոչ մէկում։ Ֆրանսերէն իմացող ուսանողները սովորաբար գալիս են «Առաւօտեան Աստղի դպրոց»-ից, որ չորս տարուց ի վեր վերածնունդ է մասնաւոր լիցէօնի։

Լիցէօնն աւարտելուց յետոյ ճապոնացի պատանին մշտնում է բարձրագոյն լիցէօն, որ մի տեսակ նախապատրաստութեան տեղ է համալսարան մտնելու համար։ Այստեղ իւրաքանչիւրն ընտրում է իր ցանկացած գիտութեան ճիւղը։ Այս լիցէօնները երեք բաժին ունին. 1) իրաւունքի և գրականութեան բաժանմունքը, 2) գիտութիւնների, ինժեներական և երկրագործութեան ֆակուլտետները մտնել ցանկացողների բաժին,

*) Այժմ մենք ունենք երկու համալսարան՝ Տոկիօում և Վիոմոում։ Առաջինը նշանաւոր է իբրեւ աւագ և աւելի լաւ է դրուած. երկրորդը վերջերս է հիմնուած, բայց արդէն յաջողութեամբ առաջագիմում է։

3) բժշկական ֆակուլտետ մտնելու բաժին: Այս լիցեոնների թիւը առայժմ 8 է. իսկ միջին թուով մտնել ցանկացողների թիւը 6000 է մօտ երկու հազար տեղի համար. այսպիսով ընդունելութիւնը դարձել է բաւական դժուար: Հասարակութիւնըն այժմ պահանջում է նոր լիցեոններ բանալ: Այստեղ ուսումը տեւում է երեք տարի. ի միջի այլոց սկսում են այնտեղ մի երկրորդ կենդանի լեզու, գերմաներէն կամ ֆրանսերէն: Հասկանալի է, որ երեք տարուայ ընթացքում աշակերտներն այս երկրորդ նոր լեզուն լաւ սովորել չեն կարողանում, մանաւանդ որ ուրիշ առարկաներով ծանրաբեռնուած են լինում: Նրանց համար այդ լեզուն երկրորդական առարկայ է և բնականապէս առանց կարեւորութեան:

Ահա այս բարձրագոյն լիցեոնն աւարտելուց յետոյ է միայն, որ աշակերտը իրաւունք ունի մտնել համալսարան առանց քննութեան, եթէ թեկնածուների թիւը շատ մեծ չէ այս կամ այն ֆակուլտետում:

Տեսնենք այժմ մեր համալսարանները:

Ճապոնիայում առաջին համալսարանը հիմնուել է 1897-ին Տոկիօում և երկրորդը 1897-ին Կիօտօում:

Տոկիօի համալսարանն ունի դաիգակուին կամ համալսարան իր վեց ֆակուլտետներով, իրաւաբանութիւն, գիտութիւններ, ինժեներական գիտութիւն (genie), բժշկութիւն և երկրագործութիւն:

Այս ֆակուլտետներից իւրաքանչիւրին կից գոյութիւն ունին հետեւել ինստիտուտները.

1) Իրաւաբանակ. ֆակուլտետը (4 տարի) ունի իրաւաբանութեան և քաղ. գիտութ. ինստիտուտները:

2) Բժշկականը (4 տարի) ունի բժշկական, դեղագործութեան ինստիտուտները:

3) Ինժեներական գիտութիւնների ֆակուլտետը (3 տարի) ունի կամուրջների և ճանապարհների, գործնական մեքենագիտութեան, ծովային ինժեներութեան,

հրձիգ զէնքերի,

գործն. ելեկտրակ.,

ճարտարապետութ.,

գործն. քիմիայի,

վառօդի,

հանքերի և մետաղագիտութեան ինստիտուտները:

4) Գրական ֆակուլտետը (3 տարի) ունի

փիլիսոփայական,

ճապոնական գրակ.,
 չինական գրական.,
 անգլիական գրական.,
 ֆրանսիական գրակ.,
 գերմանական գրակ.,
 ճապոնական պատմ.,
 պատմութեան,
 լեզուագիտութեան ինստիտուտները:
 5) Գիտութիւնների ֆակուլտետը (3 տարի) ունի
 աստղաբաշխութեան,
 ֆիզիկայի,
 քիմիայի,
 կենդանաբանութ.,
 բուսաբանութ.,
 հանքաբանութ. ինստիտուտները:
 6) Նրկրագործութեան ֆակուլտետը (3 տարի) ունի
 հողագիտական,
 հողագիտական քիմիայի,
 անտառների,
 անասնաբուժութեան ինստիտուտները:

Ընտրած ֆակուլտետն աւարտելուց յետոյ, ուսանողներն
 ստանում են գաղութի տիտղոսը, որ հաւասար է ֆրանսիական
 լիսանսիէին (licencié), և այսպիսով նրանք դառնում են օրինակ՝
 հօ-գաղութի, այսինքն իրաւաբան (հօ=իրաւունք է) կամ ի-գա-
 ղութի, այսինքն բժիշկ (ի=բժիշկ) ևայլն: Որևէ ֆակուլտետն
 աւարտելուց յետոյ կարելի է մտնել դաիգակուին կամ համալ-
 սարանն. այստեղ մասնաւոր դասընթացներ չկան: Ուսանողներն
 այստեղ կարող են աւելի հիմնաւոր դարձնել իրանց գիտու-
 թիւնը և հինգ տարուց յետոյ ներկայացնել մի շարագրութիւն
 և ստանալ լուսաւորութեան մինիստրութիւնից հաղութի տիտ-
 ղոսը, այսինքն հօ-գաղութահաղութի եթէ իրաւագէտ է, ի-գաղու-
 հաղութի՝ եթէ բժիշկ է ևայլն: Այս հաղութի տիտղոսը կարող
 են ստանալ և ոչ ուսանողներ առանց համալսարանական դա-
 սընթացքի՝ միայն ներկայացնելով համալսարանական խորհրդի
 հաւանութեանը մի շարագրութիւն:

Մինչև այժմ համալսարան աւարտած ուսանողների թիւը
 հասնում է հինգ հազարի: Առաջին ընթացաւարտները 1878
 թուականից են, այդ մարդիկ այսօր մեծաւ մասամբ պետական
 բարձր պաշտօններն են վարում: Նրանցից շատերը իրանց
 ուսումը վերջացնելուց յետոյ ուղարկուել են Ներոպա կամ Ա-
 մերիկա իրանց գիտութիւնը լրացնելու, և սրանք են, որոնք

վերադառնալով՝ կամաց-կամաց բռնել են օտարերկրացի ուսուցչապետների տեղը։ Վերջիններիս թիւը մեզ ձօտ սկզբում հասնում էր 60-ի։

Տոկիոի համալսարանը 1903—1904 թուին ունէր 3,500 ուսանող. նա ունի հետեւեալ հաստատութիւնները. 1) գրադարան 500,000 հատորներով, 2) հիւանդանոց, 3) աստղաբաշխական դիտարան, 4) բուսաբանական պարտէզ, 5) ծովային կենդանաբանական կայան (station) և 6) մի անտառ։ Կիօտօի համալսարանը հիմնուած է, ինչպէս ասացի, 1897 թուին, ունի երեք ֆակուլտետներ—իրաւաբանական, բժշկական և գիտութիւնների ու ինժեներական։ Շուտով բացուելու է նաև գրական ֆակուլտետը։

Ահա համառօտ կերպով մեր համալսարանները։ Սրանցից դուրս մինք ունինք մասնագիտական բարձր կրթութեան համար բազմաթիւ տեխնիկական դպրոցներ. այսպէս՝ ղրիստոնեական և պատերազմական, նաւային և ծովային բարձր դպրոցները, երկու բարձր առևտրական դպրոցներ, չորս տեխնիկական բարձր դպրոցներ, գեղարուեստական, օտար լեզուների դպրոցները, երկու միջնակարգ դպրոցներ տղայոց, մէկը օրիորդաց, ուր կարելի է մտնել լիցէօններն աւարտելուց յետոյ։ Ես կը յիշատակեմ նաև օրիորդաց ճեմարանները, տեխնիկական և բարձր դպրոցները։

Տոկիոի և Կիօտօի համալսարանների կրթական կազմակերպութեան մէջ խոշոր տարբերութիւն կայ։ Տոկիօում եթէ մի ուսանող տարուայ վերջին չի կարողանում բոլոր առարկաներից յաջողութեամբ քննութիւնն անցնել, նա ստիպուած է երկրորդ անգամ հարցաքննութեան ենթարկուել՝ կրկնանելով բոլորը։ Կիօտօում ընդհակառակը՝ տարուայ վերջում բոլոր առարկաներից պարտադիր քննութիւն չկայ, ուսանողն իր ուզածի պէս յարմարեցնում է քննութիւնները և ներկայանում է այն առարկաների համար, որ լաւ գիտէ։ Եթէ նա կը տրւում է, նա պարտական է յաջորդ տարին միայն նոյն առարկայից քննութիւն անցնել առանց միւսները կրկնելու։ Այս երկու ձևերն այժմ քննւում են, և անշուշտ լաւագոյնը կ'ընդունուի երկու համալսարաններում։

Մեր համալսարանի իւրաքանչիւր ուսուցչապետ ստանում է երկու տեսակ ուժձիկ, մէկը իր կոչման և միւսը իր ամբիօնի համար. առաջին տեսակ ուժձիկը, որ տրւում է այն ուսուցչապետներին, որոնք պաշտօն չեն վարում, հաւասարւում է 800—1600 իենի (իենը հաւասար է 2 ֆր. 50 ս.=1 ռ.)։ Միւրքանի տարուայ ծառայութիւնից յետոյ ստանում են նաև 500

իենի մի յաւելիւած: Իւրաքանչիւր ուսուցչապետ, որ կանոնաւորապէս պաշտօն է վարում՝ ունենալով մի ամբիօն, ստանում է 1400 իեն. բայց նա կարող է յոյս ունենալ աւելի ստանալու: Այս գումարը կարող է եւրոպացիներին քիչ թուալ, բայց քանի որ կեանքը ճապոնիայում շատ աւելի աժան է, քան Պարիզում, ուստի պարզ է, որ մեր և երոպական ուսուցչապետները մէջ վիճակի անհամապատասխանութիւն չկայ:

Կիօտօի համալսարանի ուսուցչապետ
Կ. ՄԻՎԱ.